600.0428.14.11.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2018 թվականի №428Ա
քաղ. Երևան

«ՎԻՊ ԱՎՏՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ №9/1-118 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի №596Ա ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի №417Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՎԻՊ ԱՎՏՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի նոյեմբերի 25-ին «ՎԻՊ ԱՎՏՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախությունների հատկացման №9/1-118 թույլտվությունը, որը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 նոյեմբերի 3-ի №596Ա որոշմամբ երկարաձգվել և շարադրվել է նոր խմբագրությամբ (ռադիոհաճախականության օգտագործման №0864 թույլտվություն),

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 406 875 (չորս հարյուր վեց հազար ութ հարյուր յոթանասունհինգ) դրամ գումարի (հաշվարկված՝ 2011 թվականից մինչև 2012 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածի համար) բռնագանձման վերաբերյալ առկա է Հայաստանի

Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի մայիսի 13-ին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, իսկ Ընկերությունը կատարել է 145 000 (հարյուր քառասունհինգ հազար) դրամ գումարի չափով վճարում,

դ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №346Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է 2012 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 641 350 (վեց հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր հիսուն) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ կատարել է 268 434 (երկու հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր երեսունչորս) դրամ գումարի չափով վճարում,

ե) Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի №416Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է 2016 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 238 425 (երկու հարյուր երեսունութ հազար չորս հարյուր քսանհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, որն ամբողջությամբ վճարվել է,

զ) Ընկերությունը 2018 թվականի հոկտեմբերի 31-ի գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ Ընկերությանը տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

է) Ընկերության՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը 2018 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 261 438 (երկու հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր երեսունութ) դրամ, և

հիմք ընդունելով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝

   1) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի նոյեմբերի 25-ին Ընկերությանը տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախությունների հատկացման №9/1-118 թույլտվությունը,

2) Հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 3-ի «ՎԻՊ ԱՎՏՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախությունների հատկացման №9/1-118 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №596Ա որոշումը,

3) Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի «ՎԻՊ ԱՎՏՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարների փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պարտավորեցնելու մասին» №417Ա որոշումը:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման №0864 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով մինչև 2018 թվականի հոկտեմբերի 31-ը հաշվարկված 261 438 (երկու հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր երեսունութ) դրամ պարտքը:

3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
14 նոյեմբերի 2018թ.